Եվրոպական
Ներդրումային
Բանկ

Եվրոպական Ներդրումային Բանկը ֆինանսավորում է ՓՄՁ վարկավորումը

Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ՝ www.eib.org) հետ կնքված համաձայնագրի միջոցով մենք աջակցում ենք փոքր և միջին բիզնեսին (ՓՄՁ) և 3000-ից պակաս աշխատակից ունեցող միջին կապիտալիզացիայի կազմակերպություններին (<<Միջ-Կապ>>)՝ հնարավորություն տալով նրանց օգտվել ավելի մատչելի ֆինանսավորումից և ճկուն մարման ժամանակացույցից:

Եվրոպական համագործակցություն ի օգուտ ՓՄՁ-ների

ԵՆԲ-ն Եվրամիության երկարաժամկետ վարկատու բանկ է: Նրա նպատակը ներդրումային նախագծերի ֆինանսավորումն է՝ աջակցելով ԵՄ քաղաքականության նպատակներին: Եվրամիության արտաքին գործողություններին աջակցելու համար, Եվրախորհրդարանի և Խորհրդի որոշմամբ ԵՆԲ-ին տրվում է արտաքին մանդատ՝ ԵՄ-ից դուրս համապատասխան նախագծերը ֆինանսավորելու համար:

Կապիտալի շուկայում իր բարձր վարկանիշի (AAA) շնորհիվ, ԵՆԲ-ն կարող է նպաստավոր պայմաններով միջոցներ փոխառել, որոնք նա բանկերի միջոցով փոխանցում է ՓՄՁ-ներին և <<Միջ-Կապ>>-երին: ՓՄՁ-ները և <<Միջ-Կապ>>-երը մեր կողմից տեղեկացվում են ԵՆԲ-ի ներգրավվածության և ստացված վարկի ֆինանսական պայմանների վրա նրա ազդեցության մասին: ՓՄՁ-ներին և <<Միջ-Կապ>>-երին ԵՆԲ խմբի կողմից տրամադրվող աջակցության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԵՆԲ կայքում (www.eib.org):

Ի՞նչ է իրենից ներկայացնում ԵՆԲ ֆինանսավորումը

ԵՆԲ-ն ընդլայնում է իր աջակցությունը ՓՄՁ-ներին և <<Միջ-Կապ>>-երին՝ նրանց հնարավորություն տալով օգտվել կենսական կարևորություն ունեցող նոր վարկային գծերից: Վարկի նվազագույն ժամկետը 2 տարի է (վարկի փաստացի ժամկետը կախված է ֆինանսավորվող նախագծի տնտեսական և տեխնիկական բնույթից) և այն կարող է օգտագործվել շատ փոքր նախագծերից մինչև 25 մլն եվրո արժեքով ներդրումների ֆինանսավորման համար: Ամեն դեպքում, ԵՆԲ-ի ներդրումը չի կարող գերազանցել 12,5 մլն եվրոն:

Ո՞վ կարող է դիմել EIB վարկի համար

• Մինչ ներդրումը՝ համախմբված հիմունքներով 250-ից պակաս աշխատող ունեցող տեղական ՓՄՁ-ները,
• Մինչ ներդրումը՝ համախմբված հիմունքներով 3000-ից պակաս աշխատող ունեցող տեղական <<Միջ-Կապ>>-երը,
• Բիզնես ոլորտի մասնակիցների մեծ մասն իրավունք ունի դիմել այս ծրագրին, մի քանի բացառություններով, որոնց թվում են. զենքի, զինամթերքի, ռազմական կամ ոստիկանական սարքավորումները կամ ենթակառուցվածքները, մարդկանց անձնական իրավունքներն ու ազատությունը սահմանափակող գործունեության տեսակները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գործընթացները, որոնք էթիկայի կամ բարոյականության տեսանկյունից համարվում են վիճահարույց կամ արգելված են ազգային օրենսդրությամբ, այնպիսի ապրանքների արտադրության կամ վաճառքի գործունեության տեսակներ, որոնցով խախտվում է ապրանքանիշերի նկատմամբ սեփականության իրավունքը կամ աշխարհագրական սահմանումը, խաղատնային և ծխախոտային բիզնեսին առնչվող գործունեությունը:

Ինչի՞ համար կարող է օգտագործվել ԵՆԲ վարկը

ԵՆԲ վարկային միջոցները կարող են օգտագործվել այն ներդրումները և ծախսերը ֆինանսավորելու համար, որոնք կատարվել են ՓՄՁ-ների կամ <<Միջ-Կապ>>-երի զարգացման համատեքստում, այսինքն.
• Նյութական ներդրումներ՝ նյութական ակտիվների ձեռք բերում, նորոգում կամ ընդլայնում՝ հողի ձեռք բերման գնումների հետ կապված որոշ սահմանափակումներով:
• Ոչ նյութական ներդրումներ՝ մասնավորապես, հետազոտության և մշակման գործընթացի (R&D) ծախսերը, լիցենզիաների և ծրագրային ապահովման ձեռք բերում,
• ՓՄՁ-ների կամ <<Միջ-Կապ>>-երի գործունեության համար անհրաժեշտ միջին և երկարաժամկետ շրջանառու միջոցների ձեռքբերում:

Ի՞նչ կշահի Ձեր բիզնեսը այս ծրագրից

• Բիզնեսի վարկավորման ստանդարտ պայմանների հետ համեմատած՝ կարող եք ստանալ ցածր տոկոսադրույքներ կամ ավելի երկար մարման ժամկետներ:
• Ձեր բիզնեսի առանձնահատկություններին և դրամական հոսքի պահանջներին համապատասխանելու նպատակով կարող եք բանակցել վարկի ժամկետի կամ մարման պարբերականության հետ կապված հարցերի շուրջ:
• Այն թույլ է տալիս զգալի ներդրումներ կատարել Ձեր բիզնեսում՝ առանց Ձեր դրամական հոսքերի կամ իրացվելիության վրա բացասական ազդեցության:

Ի՞նչ է ակնկալվում դրա դիմաց

ԵՆԲ-ի պահանջով. (ա) պատշաճ ծանուցման դեպքում, Դուք պետք է թույլ տաք ԵՆԲ-ի ներկայացուցիչներին այցելել և ստուգել գործունեության բոլոր այն վայրերը, սարքավորումները և աշխատանքները, որոնք կապված են վարկին առնչվող բիզնես նախագծի հետ, և (բ) մենք կարող ենք Ձեր մասին տեղեկություններ տրամադրել ԵՆԲ-ին:

Խնդրում ենք կապվել Հասարակայնության հետ կապերի գծով մեր աշխատակցի հետ կամ այցելել մեր որևէ մասնաճյուղ, որպեսզի քննարկենք, թե արդյոք Ձեր բիզնեսն իրավունք ունի մասնակցել ԵՆԲ-ի «Վարկեր ՓՄՁ-ների համար» կամ «Վարկեր <<Միջ-Կապ>>-երի համար» ֆինանսավորման ծրագրին: